ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՌԻ ԱՆՎԱՆ Հ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Զբոսաշրջության զարգացման նախադրյալները Արագածոտնի մարզում
ԱՌԱՐԿԱ	Աշխարհագրություն
ԿԱՏԱՐՈՂ	Արարատի մարզի, Արաքսավանի միջն. դպրոցի ուսուցչուհի Մարինե Ներսիսյան
ԴԱՍԱԽՈՍ	Աշոտ Խաչատրյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
1. ՀՀ զբոսաշրջության հնարավորությունները 5
2. Արագածոտնի մարզի ուժեղ և թույլ կողմերը 7
3. Արագածոտնի մարզի աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ 8
4. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտի իրավիճակը 9
5. Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա, սպորտ 11
6. Աշխատանք և սոցիալական ծառայություն 12
7. Պատմամշակութային և բնական հուշարձաններ 13
Եզրակացություններ 24
Օգտագործված գրականության ցանկ 26

Ներածություն

Արդիականությունը: Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության դինամիկ զարգացող և հեռանկարային ճյուղերից է, որն իր զարգացմամբ ոչ միայն մեծ դեր կարող է խաղալ տնտեսության զարգացման համար, այլև նպաստել մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում նոր երկիր է: Այս բնագավառում մեր հանրապետությունը ունի զգալի ներուժ: Հայաստանը՝ զբոսաշրջիկների կողմից, որպես զբոսաշրջային ուղղություն ընտրելու հիմնական պատճառներն են երկրի բնությունը և պատմամշակութային հուշարձանները, ավանդույթները, հայկական սփյուռքի առկայությունը: Ընդհանուր առմամբ զբոսաշրջիկների կողմից Հայաստանը լավ է գնահատվել: Լավագույն գնահատականները տրվել են տեսարժան վայրերին և հանգստի գոտիներին, իսկ ամենացածր գնահատականները՝ ճանապարհներին և գների մակարդակին: Հայաստանն աշխարհի այն երկրներից է, որտեղ կան զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բազմազան պայմաններ, որոնք ռացիոնալ, նպատակային օգտագործելու դեպքում զբոսաշրջությունը կարող է դառնալ հանրապետության ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը:

Երկրի մասշտաբով զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է առանձին մարզերի ներգրավվածությունը, նրանց ենթակառուցվածքներով զարգացածության մակարդակը, զբոսաշրջային ռեսուրսների հասանելիությունը, զբոսաշրջային ռեսուրսների ճիշտ գնահատումն ու դրանց ճիշտ օգտագործումը զբոսաշրջության ճիշտ կազմակերպումը անդրադառնում է տվյալ մարզի զարգացվածության մակարդակի բարձրացման վրա,: Ուստի մեր խնդիրն է բացահայտել զբոսաշրջության և հանգստի միջազգային պրակտիկայում ընդունված տեսակները, չափանիշները, վերլուծել ՀՀ Կոտայքի մարզում զբոսաշրջության ենթակառուցվածքները:

Նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակը Արագածոտնի մարզում զբոասաշրջության զարգացման հնարավորությունների բացահայտումն, գրավիչ զբոսաշրջային ենթակառուցվածքների ուսումնասիրումն և մարզում առկա հիմնախնդիրների վեր հանումն է, ինչպես նաև մարզ ժամանող զբոսաշրջիկների

թվաքանակի ավելացումն և ներգնա ու ներքին զբոսաշրջության արդի իրավիճակի և հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունն է:

Աշխատանքի նպատակին հասնելու համար դրվել և լուծվելու են հետևյալ խնդիրները.

- Ներկայացվել է ՀՀ զբոսաշրջային ներուժը
- Տրվել է Արագածոտնի մարզի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը
- Ներկայացվել են Արագածոտնի մարզի բնական և պատմամշակութային օբյեկտները
- Ներկայացվել են Արագածոտնի մարզի ենթակառուցվածքային ռեսուրսները

ՈՒսումնասիրության օբյեկտը և առարկան: Աշխատանքի ուսումնասիրման **օբյեկտը** Արագածոտնի մարզի զբոսաշրջության ոլորտն է՝ հարակից ենթակառուցվածքներով: Առարկան մարզի զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

Մեթոդաբանությունը և օգտագործված մեթոդները: Աշխատանքը կատարելիս կիրառվել են ուսումնասիրության հետևյալ մեթոդները՝ նկարագրական, համեմատական, պատմական, վերլուծական, համադրման, համակարգային մոտեցման, վիճակագրական, դասակարգման, քարտեզագրական:

1. ՀՀ զբոսաշրջության հնարավորությունները

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության բարդ և համապարփակ բնագավառ է, ունի մեծ ազդեցություն ինչպես այդ տնտեսության կառուցվածքի և ընդհանուր իրավիճակի, այնպես էլ տարբեր երկրների և տարածաշրջանների տնտեսական զարգացման վրա: Զբոսաշրջությունը տնտեսության զարգացման հզոր խթան է և որոշակի տեղ է զբաղեցնում ապրանքների ու ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալում: Այդ ոլորտի կայուն զարգացումը նպաստում է տնտեսության կայուն աճին, շրջակա միջավայրի պահպանմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը և այլն:

Այսպիսով, զբոսաշրջությունը տնտեսության այն բարձր եկամտաբեր և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է, որն իր կարևորությամբ ներառված է այնպիսի գլոբալ համակարգերում, ինչպիսիք են՝ կայուն զարգացումը (աղքատության հաղթահարումը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն) և մշակութային արժեքների փոխադարձ արժևորման համակարգերը, որոնք Հայաստանի պարագայում նույնպես արդիական և էական նշանակություն ունեն:

Այս համատեքստում հատկանշական է ներկայացնել ՀՀ տնտեսության մեջ զբոսաշրջության բաժինը

2009-2021 ընթացքում ՀՀ զբոսաշրջության ոլորտում գրանցվել են զարգացման բարձր տեմպեր:

Հաշվի առնենք նաև, որ 2009թ.-ին, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, երբ համաշխարհային զբոսաշրջային այցելությունները նվազել են 4.5 %-ով, Հայաստանում, այնուամենայնիվ գրանցվել է 3% աճ: Տվյալ տարում աճի տեմպը նվազել է համեմատած մյուս տարիների հետ, իր հերթին բացասաբար անդրադառնալով միջին տարեկան աճի ցուցանիշի վրա:

Աղուսյակ 1.

ՀՀ ներգնա և արտագնազբոսաշրջիկների թվաքանակը 2009-2021թթ[1]

Տարեթվեր	Ժամանողներ	Մեկնողներ
2009	575281	526193
2010	683979	640032
2011	757935	714953
2012	843330	806555
2013	1081985	1080022
2014	1203746	1198060
2015	1192120	1187369
2016	1259657	1262687
2017	1494779	1481755
2018	1651782	1622791
2019	1894377	1867888
2020	375 216	346 093
2021	670521	870 308

Ըստ ՀՀ ԱՎԿ տվյալների՝ 2019թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1867888 զբոսաշրջիկ: Նախորդ տարվա համեմատ ժամանողների թվաքանակն աճել է 14.7%-ով:

2020թ ՀՀ է ժամանել 375216 զբոսաշրջիկ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է համավարակի պատճառով և կազմել է նախորդ տարվա 19.8%-ը:

2021թ ՀՀ է ժամանել 870308 զբոսաշրջիկ, որը նախորդ տարվա համեմատ աճել է համավարակի պատճառով և կազմել է նախորդ տարվա 2.4 անգամ ավելի:

Եթե դիտարկենք զբոսաշրջային այցերի ցուցանիշներն ըստ նպատակի, ապա Հայաստան հիմնականում այցելում են հանգստի և ժամանցի, այնուհետև՝ գործնական նպատակով: Նշենք, որ բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

[1] www.armstat.am ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը վիճակագրական հրապարակումներ ըստ տարիների

ՀՀ-ում զբոսաշրջությունը, որպես գործունեության յուրահատուկ ոլորտ հայտարարված է զարգացման գերակա ուղղություն: Սակայն ոլորտի զարգացման տեմպերը և մասշտաբները չեն համապատասխանում առկա ռեկրեացիոն և այլ ռեսուրսներին և կառավարության կողմից ընդունված զբոսաշրջության զարգացման հայեցակարգի պահանջներին:

Բնականաբար զբոսաշրջային ծառայությունների տարեցտարի բարելավումը և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը նպաստում է ոչ միայն ներգնա զբոսաշրջիկների թվի ավելացմանը, այլ նաև զբոսաշրջությունից ստացվող եկամուտների որոշ աճին:

2. Արագածոտնի մարզի ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմեր • Հարուստ պատմամշակութային ժառանգություն • Գեղատեսիլ բնություն • Ազգային առանձնահատուկ ավանդույթների, սովորույթների առկայություն • Տրանսպորտային հասանելիություն (մայրաքաղքին մոտ գտնվելը)	Թույլ կողմեր • Մասնագետների ցածր որակավորում • Ավտոճանապարհներիի ոչ ամբողջական լիարժեք վիճակ • Սպասարկման ամբողջական համակարգերի ոչ համապատասխան բարձր որակ
Հնարավորություններ • Մարզը կարող է դառնալ միջազգային սպորտի, հանգստի, առողջարանային և տուրիզմի կենտրոն • Կարող է դառնալ էքստրեմալ	Մարտահրավերներ • Բնակչության ոչ ամբողջական մասնակցությունը և ներգրավվումը, • Անբավարար պետական աջակցությունը • Սողանքային տեղանքի

սպորտաձի սիրահարների սիրելի վայրերից մեկը: Կարելի է կազմակերպել նաև ուխտագնացություն: • Որոշ քաղաքներ հնարավոր է դարձնել հանգստյան գոտի, կազմակերպել լեռնային արշավներ, ձիավարություններ,	առկայությունը • Հնարավոր մշակութային բախումների առկայություն

3. Արագածոտնի մարզի աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

Արագածոտնի մարզը հիմնադրվել է 1996թ.: Մարզի տարածքը կազմում է 2753քմ և զբաղեցնում է ՀՀ տարածքի 9.3%-ը: Մարզը իր մեջ ընդգրկում է Աշտարակի, Թալինի, Ապարանի և Արագածի շրջանները: Աշտարակի տարածաշրջանը և Թալինի տարածաշրջանի մի մասը գտնվում են նախալեռնային գոտում, իսկ Ապարանի և Արագածի տարածաշրջանները և Թալինի մի մասը լեռնային գոտում, ծովի մակերևույթից 2000-2500մ բարձրության վրա: Մարզի 19 համայնքներ ունեն լեռնային, իսկ 40-ը՝ բարձր լեռնային կարգավիճակ: Մարզում կա 72 համայնք:

Արագածոտնի մարզը իր անունը ժառանգել է պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից:

Մարզի աշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ գտնվում է մայրաքաղաք Երևանի և ամենաբարձր լեռնագագաթի՝ Արագածի միջև:

Արագածոտնի մարզը գտնվում է Արագած լեռնազանգվածի հարավ-արևմտյան, հարավային, արևելյան և հյուսիսային լանջերին՝ ներառելով նաև Արագած լեռնազանգվածի և Փամբակ ու Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև ընկած տարածքը: Մարզը ծովի մակերևույթից գտնվում է 1000-4090մ բարձրության վրա: Մարզի համեմատաբար ցածրադիր մասերն են Աշտարակի ու Թալինի տարածաշրջանները, Արարատյան գոգավորության նախալեռնային հատվածը, ծովի մակերևույթից 1000-

1500մ բարձրության վրա: Մարզի ամենաբարձր կետը Արագածի հյուսիսային գագաթն է 4090մ բարձրությամբ(Նկ. 1):

Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն 3 ավտոխճուղիներ՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին /միայն արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում/:



Նկ. 1 Արագածոտնի մարզի ֆիզիկական քարտեզ:

4. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտի իրավիճակը

Արագածոտնի մարզի տարածքը Հայաստանի ամենավաղ բնակեցված շրջաններից է: Դրա վկայությունն են տարբեր վայրերում հայտնաբերված քարի ու բրոնզի դարերի նյութական մշակույթի հուշարձանները: Բնակչությունը ավանդաբար կենտրոնացված է եղել Քասաղ գետի և նրա վտակների միջին ավազաններում: Մինչդեռ տարածքի մեծ մասը յուրացված չի եղել և մշտական բնակչություն չի ունեցել:

Բնակչության ***տարաբնակեցման ներկայիս պատկերը հիմնականում ձևավորվել է***

վերջին տասնամյակների ընթացքում, երբ նոր յուրացված հողերի վրա ստեղծվեցին մի շարք նոր բնակավայրեր:

Արագածոտնը ՀՀ ամենագյուղաբնակ մարզն է: Բնակչության շուրջ 77%-ն ապրում է գյուղերում: Բնակավայրերի (3քաղաք և 117գյուղ) և բնակչության ճնշող մեծամասնությունը կենտրոնացած է 900-1500 մ բացարձակ բարձրությունների համեմատաբար հարթ ու մեղմաթեք տարածքներում, թեև մարզի հյուսիսային մասում կան զգալի թվով բարձրլեռնային գյուղեր: Բարձրլեռնային գյուղերը իրենց մեծությամբ մի քանի անգամ զիջում են ցածրադիր գոտու գյուղերին:

Արագածոտնի մարզն առանձնանում է նաև նրանով, որ այստեղ են հիմնականում կենտրոնացած Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններից ***եզդիները:*** Նրանք բնակվում են ինչպես խառը՝ հայերի հետ միասին, այնպես էլ առանձին մեծամասամբ՝ բարձրլեռնային գյուղերով: Եզդիաբնակ գյուղերի բնակչության հիմնական զբաղմունքը արոտային անասնապահությունն է;

Մարզի գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը կազմում է 875մարդ: Այն զգալի չափով մեծ է մարզի ցածրադիր հատվածներում՝ Աշտարակի ենթաշրջանում: Մարզի առավել խոշոր և հայտնի գյուղերն են՝ Օշականը (4,8հազ բն.), Արագածավանը (5,1հազ բն.), Բյուրականը (4,3 հազ բն.), Ոսկեվազը (4,2հազ.բն), Կարբին (3,7հազ բն.):

Մարզի ամենամեծ բնակավայրը ***մարզկենտրոնն է՝ Աշտարակ քաղաքը (21 հազ. բնակիչ): Աշտարակը ՀՀ գեղատեսիլ բնակավայրերից է: Տարածվում է Արագած լեռան հարավային ստորոտին, Քասաղ գետի կիրճի երկու ափերին, ծովի մակարդակից ավելի քան 1100 մ բարձրության վրա:***

Քաղաքն ունի բարենպաստ աշխարհագրական դիրք. գտնվում է մայրաքաղաքից ընդամենը 20 կմ հեռավորության վրա՝ ***Երևան–Գյումրի*** և ***Երևան–Սպիտակ–Վանաձոր*** ավտոխճուղիների խաչմերուկում: Քաղաքի սահմաններում այդ խճուղիները Քասաղ գետը հատում են 3 կամուրջներով: Դրանցից հնագույնը կառուցվել է 17-րդ դարում, մյուս երկուսը՝ մեր օրերում:

Աշտարակը 1960-ական թվականներից սկսած զարգացել է որպես Երևանի ***արբանյակ քաղաք:*** Մարզային կենտրոն դառնալուց հետո (1995 թ.) կատարում է նաև մարզի ընդարձակ տարածքի ***վարչական, տնտեսական, կրթամշակութային կազմակերպիչ***

կենտրոնի գործառույթ: Քաղաքում, մարզային ղեկավար մարմիններից բացի, կան գիտական հաստատություններ, արդյունաբերական ձեռնարկություններ, կրթական, մշակութային ու առողջապահական հիմնարկներ:

Արագածոտնի մարզում քաղաքի կարգավիճակ ունեն Աշտարակից բացի ևս երկու բնակավայր՝ ***Ապարանը(6,5 հազ բն.) և Թալինը (5,3հազ բն.)***:

ՀՀ Արագածոտնի, Լոռու և Կոտայքի մարզերի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ: ՀՀ Արագածոտնի մարզի կոյուղու համակարգերը չեն միացված գործող մաքրման կայաններին:

Աղուսյակ 2. ՀՀ Արագածոտնի, Լոռու և Կոտայքի մարզերի 2021թ. կեղտաջրերի հեռացում (մլն.մ³) [2]

	Ընդամենը	այդ թվում		
		աղտոտված (առանց մաքրման)	չափորոշային մաքուր	ոչ բավարար մաքրված
ՀՀ	810.8	132.2	559.8	118.8
Արագածոտն		**1.2**	**0.0**	**0.0**
Լոռի		3.5	2.4	2.3
Կոտայք		5.9	0.0	0.3

Կոշտ կենցաղային թափոնների համար թվով 59 համայնքներում կատարվել է հողհատկացում, սակայն փաստացի գործում է 9 աղբավայր: Աղբահանությունը մասնագիտացված բեռնատարերով իրականացվում է միայն քաղաքային բնակավայրերում, մասնակի կերպով, իսկ գյուղական բնակավայրերում միայն հարմարեցված տեխնիկական միջոցներով (ինքնաթափեր, լաֆետներ, այլ):

5. Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա, սպորտ

Մարզի առողջապահական համակարգում գործում են 25 բուժհաստատություններ, որոնցից 5-ը մարզպետարանի ենթակայության' (1-ը' ՊՈԱԿ, 4-ը' ՓԲԸ), դրանցից չորս բժշկական կենտրոն, մեկ առողջության կենտրոն, համայնքային ենթակայության' 1 առողջության կենտրոն, 15 ամբուլատորիաներ և 1 առողջության առաջնային պահպանման կենտրոն, 3-ը' մասնավոր:

[2] http://aragatsotn.mtad.am/



Գծանկար 1. ՀՀ Արագածոտնի մարզի բուժհաստատություններ

Մարզում գործում է 4 մարզադպրոց' Աշտարակ, Թալին, Ապարան քաղաքային համայնքներում և Քուչակ գյուղական համայնքում:

6. Աշխատանք և սոցիալական ծառայություն

ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 2021 թ. դրությամբ կազմում էր շուրջ 1 316.4 հազար մարդ, որի 4.14% կամ 54.5 հազար մարդը բնակվում է ՀՀ Արագածոտնի մարզում: Անկախ այն փաստից, որ ՀՀ Արագածոտնի մարզում 2021թ-ին տնտեսապես ակտիվ բնակչության կշիռը ավելի բարձր է եղել, քան հանրապետության միջին ցուցանիշը 0.2%-ով և կազմել է 62.7%, այս ցուցանիշը 80.8% կտրուկ նվազել է 2013-2015թթ.:Տնտեսապես ակտիվության մակարդակը տարբեր է տղամարդկանց (72.3%) և կանանց (54.8%), ինչպես նաև քաղաքային (59.3%) և գյուղական (63.6%) տարածքների միջև: 2021թ. համեմատած ՀՀ Լոռու և Կոտայքի մարզերի հետ մարզի տնտեսական ակտիվության մակարդակը բարձր է 3.9%-ով և 0.5%:

ՀՀ Արագածոտնի մարզում զբաղվածությունը նվազել է 2013-2015թթ. ընթացքում, 53.7 հազար մարդուց հասնելով 51.4 հազար մարդ: Զբաղվածների շուրջ 46% կազմում են կանայք, որը զբաղվածության աստիճանը նվազել է 2013թ. 54.7%:

7. Պատմամշակութային և բնական հուշարձաններ

Պատմա-մշակութային առումով մարզը մի յուրօրինակ թանգարան է, ուր շռայլորեն շողշողում են Հայաստանի պատմության գրեթե բոլոր շրջաններին բնորոշ պատմական հուշարձանները: Լավ պահպանված են կիկլոպյան ամրոցներ, մ.թ.ա 3-1-ին հազարամյակի բնակատեղի (Գեղարոտ), ուրարտական ամրոցներ (Հնաբերդ, Ծաղկահովիտ), Արշակունյաց թագավորների դամբարանը, Զորափում (4-րդ դար), Ագարակի, Ավանի, Քաղսի, Փարպիի բազիլիկաները (5-րդ դար), Օհանավանքը(5-8րդ դարեր), Մ. Մաշտոցի դամբարանի վրա կառուցված եկեղեցին Օշականում (5-րդ դար), Շենիկի (5-7-րդ դարեր), Մաստարայի (6-րդ դար), Գառնահովտի (6-7-րդ դարեր), Ներքին Սասնաշենի եկեղեցիները, Քրիստափորի վանքը (7-րդ դար), Թեղենյաց վանքը (7-8-րդ դարեր), Աշտարակի կամուրջը (17-րդ դարեր):

Արագածի հարավ-արևելյան եզրափեշին, Արարատի և Արայի լեռների դեմ-դիմաց, Քասաղ գետի խորունկ կիրճով երկփեղկված հարթակում, ծովի մակերևույթից 1111մ բարձրության վրա փռված է 11 եկեղեցիներով ու 111 հուշարձաններով Աշտարակ քաղաքը: Այստեղ պահպանվել է նշանավոր Ծիրանավորը (5-րդ դար), Կարմրավորը (7-րդ դար), Սպիտակավոր (13-14-րդ դար) եկեղեցիները, Ս. Սարգիս (13-րդ դար), և Թուխ Մանուկ մատուռները (13-րդ դար), Ս. Մարինե եկեղեցին (1281թ.):

Աշտարակ քաղաքի արևելյան եզրին գտնվում է **Ծիրանավոր Ս. Աստվածածին** եկեղեցին: Այն կառուցված է սև տուֆից և նմանվում է ամրոցի: Հավանական ենթադրությամբ՝ այն եղել է հեթանոսական մեհյան, որը նախ վերափոխվել է եկեղեցու և ապա, երրորդ անգամ էական, հիմնական վերակառուցման է ենթարկվել 5-րդ դարում[3]:

Կարմրավոր եկեղեցին: Կարմրավորը արտաքինից ունի ընդգծված խաչաձևություն՝ ուղղաձիգ թևաեզրերով: Խաչաթևերը երկլանջ են, չորս տումբաներն ու գոգավոր հովհարակերպ վեղարը ծածկված են կարմրանարնջագույն կղմիդներով(Նկ. 2):

[3] http://www.findarmenia.com/arm/sights:

Նկ. 2կարմրավոր եկեղեցին:

Աշտարակ քաղաքում է գտնվում նաև Ս. **Մարինեն**, որն իր իսկ որմերին փորագրված արձանագրություններում անփոփոխ կոչվում է Մարիանե: Հատակագծային չափերով այն մոտ է Աղջոց վանքի (1207թ.) և Գեղարդի (1215թ.) եկեղեցիներին: Հետազոտողները դոկտոր Ստ. Մնացականյանը ասել է,որ <<Մարինե եկեղեցին... իր ընդհանուր հորինվածքով և յուրովի վերասլաց համաչափություններով... ակնհայտորեն վկայում է 13-րդ դարի հայ ճարտարապետների լայն ստեղծագործական որոնումների մասին, վկայում, որ պաշտանմունքային կառուցվածքների կանոնի դարձած ձևերը միշտ չէ, որ կաշկանդում էին ստեղծագործական պոռթկումները, միշտ չէ, որ խոչընդոտ էին տաղանդավոր ճարտարապետների ստեղծագործական մտահաղացումների իրականացման ճանապարհին:

Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցին շարված է դեղնաձիրանագույն վառ քարերով: Իսկ եկեղեցին կոչվել է Սպիտակավոր այն պատճառով, որ այդ անվանումը տրված է եղել ավելի հնածնունդ եկեղեցու, և վերջինիս բաժին հասավ աստվածամորը վերագրվող մի այլ՝Սպիտակավոր մակդիրը՝այդտեղ պահվող համագույն սրբության պատճառով:

Ս. Սարգիս եկեղեցին գտնվում է Քասաղի ձախափնյա ժայռեղեն դարավանդին: Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է Կամսարականների կողմից 13-րդ դարում: Այն փոքրածավալ է, քառանկյուն հատակագծով, վերաձիգ հորինվածքով գմբեթավոր շինություն է: Հիմնովին վերականգնվել է 1986թ-ին[4]:

Աշտարակ քաղաքը հայտնի է նաև իր **կամուրջներով:**

[4] http://www.findarmenia.com/arm/sights/:

Քասաղի (քարսահ) քարակերտ, ծիածանակամար հազարամյա առաջին կամուրջը Բագրատունիների ժամանակակիցն է, գուցե շինված Սմբատ կամ Գագիկ թագավորների օրոք, որոնք Ախուրյան-Արաքս ջրուղու երկարաթռիչք, կրկնահարկ կամուրջների շարքով կապել էին Արևմտյան Հայաստանը Արարատյան միջնաշխարհին՝ Աշտարակի վրայով[5]:

Նկ. 3 Աշտարակի կամուրջը Քասաղ գետի վրա:

Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին: Պատմական Արագածոտնի գյուղերից մեկում՝ Մուղնիում գտնվում է Մուղնու վանքը[6]:

Հայտնի չէ, թե երբ է հիմնադրվել Մուղնու վանքը: Այն գտնվում է երբեմնի մատուռի տեղում: Մուղնու եկեղեցին 6-7րդ դարերին բնորոշ գմբեթավոր սրահ է՝ շարված սրբատաշ տուֆով:

Վիմական արձանագրությունների հավաստմամբ Մուղնու ներկայիս վանքը հիմնադրվել է Մարտիրոս եպիսկոպոսի հորեղբոր՝ Հակոբ Մուղնեցու որդի Հովհաննես վարդապետը 1664թ., կաթողիկոսի բարոյական ու նյութական օգնությամբ, գյուղից գանձվող հարկերով, Հովհաննեսի խնայողություններով, հասարակական միջոցներով, նվիրատվություններով(Նկ.4):

[5] http://www.navasardtours.com/:
[6] http://hushardzan.am/category/aragatsotn/aragatsotn-monuments/:

Նկ. 4 Մուղնու Ս Գևորգ եկեղեցին:

Հովհաննավանքը: Օհանավան գյուղը, որը գտնվում է Մուղնուց մի փոքր հյուսիս, իր շրջակայքով հնամենի կոթողների եզակի թանգարան է: Այստեղ Քասաղ գետի կիրճի եզրին է գտնվում նշանավոր Հովհաննավանքը, մի տարածքում, ուր գոյություն ուներ 5-6րդ դարերում միանավ բազիլիկ եկեղեցի:

Սաղմոսավանքը: Օհանավան գյուղին անմիջապես հարևան է Սաղմոսավանը, որտեղ գտնվում է Սաղմոսավանքը: Այն եղել է միջնադարյան Հայաստանի հոգևոր կենտրոններից մեկը: Կառուցվել է թխաթույր փափկաքարից (տուֆ)[7]:

Արտաքինից ուղղանկյուն է, պատերը պարզ են, զուրկ հարդարանքի միջոցներից(Նկ.5):

Նկ. 5 Սաղմոսավանքը:

[7] Գրիգորյան Ա., Բնության հուշարձանները Սովետական Հայաստան, Ե. 1967թ., էջ 85:

Տեղերի վանքային համալիրը: Տեղերի վանքային համալիրը, որը կառուցվել է XIIIդ.ում, գտնվում է Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում, Արագած լեռան հարավային լանջին գտնվող Տեղեր գյուղում[8]:

Եկեղեցուն արևմուտքից կից է գավիթը (ըստ այուներից մեկի վրա պահպանված արձանագրության շինարարությունը տևել է 11 տարի և ավարտվել 1232թ-ին): Այն իր չափերով գերազանցում է եկեղեցուն (Նկ.5):

Նկ.6 Տեղերի վանքային համալիրը:

Աղձքի ճարտարապետական համալիրը: Աշտարակ քաղաքի մոտ գտնվող Զորափ (Աղձք) գյուղի հյուսիս-արևելյան կողմում, անդնդախոր կիրճի եզրին տեղավորված է հայկական վաղ միջնադարյան ամենաուշագրավ ճարտարապետական համալիրներից մեկը: Այստեղ մեզ են հասել եռանավ, քառամույթ բազիլիկայի մնացորդներ, նրանից հարավ գտնվող Արշակունի թագավորների դամբարանը և երեք հուշասյուներ ստիլիբոտների մնացորդներ՝ տեղավորված Արշակունյաց դամբարանից հարավ: Ճարտարապետական համալիրը տեղավորված է եղել կիրճի երկայնքով, ընդ որում բազիլիկայի և թագավորական դամբարանի որմնախարիսխները տեղավորված են եղել միևնույն գծի վրա: Աղձքի հուշարձանները մեզ են հասել խիստ վնասված դրությամբ[9]:

Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցին: Արագածի հարավ-արևելյան լանջին՝ Բյուրական գյուղի կենտրոնական մասում գտնվում է Սբ. Հովհաննես եկեղեցին: Այս ճարտարապետական հուշարձանը միանավ բազիլիկ տիպի եկեղեցի է:

[8] http://www.navasardtours.com/
[9] http://www.findarmenia.com/arm/sights/:

Օշականի հուշասյունը, որըավանդաբար Մորիկի մորն է վերագրվում, ամեն ից

անրահայտն է գիտական գրականության մեջ՝ թեև պահպանված է ոչ բարվոք վի ճակում:Աստիճանաձև պատվանդանը քայքայված է, բունը ջարդված, առանց պսա կող խոյակի: Այդ իսկպատճառով նրա մասին գաղափար ենք կազմում Թ. Թորա մանյա– նի վերակազմությաննախագծով:

Օշականից հյուսիս-արևելք «Մանկանոց» կոչվող վայրում կանգուն է Ս.Սիոն եկեղեցին (VIIդ.):

Օշականում է գտնվում Ս. Մաշտոց եկեղեցին: 443թ-ին կառուցել է իշխան Վահան Ամատունին՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա[10]:

Ամբերդ: Բյուրականից 8-10կմ դեպի հյուսիս Արագածի դաշտահայաց հարավային լանջին է գտնվում միջնադարյան ամրոցներից մեկը՝ Ամբերդը: Գտնվում է Արքաշեն և Ամբերդ գետերի միացման տեղում՝ եռանկյունաձև հրվանդանին, 2300 մ բարձրության վրա: Դղյակը և պարսպի որոշ հատվածներ կառուցվել են VII դարում, Կամսարականների օրոք: (X դար) Ամրոցը պատկանում էր Պահլավունի իշխաններին և Բագրատունիների թագավորության ռազմապաշտպանական կարևոր հենակետերից էր(Նկ.6):

Նկ. 7 Ամբերդը:

Զովունու Պողոս-Պետրոս եկեղեցին գտնվում է Արագածոտնի մարզի Ապարանի արհեստական ջրամբարի կղզում, կառուցման թվականը հայտնի չէ: Թ.Թորոմանյանը այն թվագրել է 5-րդ դարով:

[10] http://hushardzan.am/9409/

Նկ. 8 Զովունու Պողոս-Պետրոս եկեղեցին:

Արագածոտնի մարզում շատ են բնական հուշարձանները, որոնցից ամենափառահեղը Արագած լեռն է:

Արագածը հանգած հրաբուխ է և ամենաբարձրն է Հայաստանում ու Անդրկովկասում: Սա հրաշալի բնական հուշարձան է, անցյալում առավել ակտիվ գործած խոշոր հրաբուխներից: Նրա լանջերի սփռված կոների արտավիժած լավաներով են ծածկված լեռան լանջերը, ընդհուպ մինչև ցածրադիր փեշերը: Տեղ-տեղլավային հոսքերը առաջացրել են սարահարթեր, երբեմն էլ՝ թմբաձև բլուրներ, որոնք լավաների բեկորատվածության շնորհիվ վեր են ածվել հսկայական քարակույտերի: Արագածի ընդհանուր առմամբ մեղմ լեռնալանջերը շատ տեղերում կտրտված են մեծ ու փոքր ձորերով (Ամբերդի, Մանթաշի), որոնք մեծ մասամբ շառավղաձև ձգվում են գագաթամերձ շրջանից դեպի ստորոտները:

Նկ. 9 Արագած լեռնազանգված[11]:

Քասաղ գետի հովիտ: Հովիտը իրենից ներկայացնում է տեսարժան բնական հուշարձան, որը սահմանափակվում է հյուսիսում Փամբակի լեռնաշղթայով, արևմուտքում Արագածի լեռնազանգվածով, արևելքում Ծաղկունյաց լեռնաշղթայով և Արա լեռով: Հարավում գետը դուրս է գալիս Արարատյան դաշտ, որտեղից էլ թափվում է Արաքսի ձախակողմյա վտակ Սևջրի մեջ: Քասաղի ակունքները գտնվում են 2000մ, իսկ գետաբերանը 850մ բարձրություններում: Վերին հոսանքում հունը տարվա մեծ մասում անջուր է: Քասաղի վերին հոսանքի հսկայական գետահովիտը Արագածի և Փամբակի լեռնաշղթաների միջև զբաղեցված է ալուվիալ և պրոլուվիալ շլեյֆով: Ալուվիալ հարթության վրա գետը միանդրում է և երևում են հնահուներ[12]:

Նկ. 10 Քասաղ գետի հովիտը ստորին հոսանքում:

Քասաղի գոգահովտի երկու ափերը միացվել են բազմաթիվ կամուրջներով:

Ամբերդ գետ: Քասաղի աջ վտակ Ամբերդ գետը ունի 36կմ երկարություն: Այն սկիզբ է առնում Արագածի մերձկատարային սարավանդի(3200մ) աղբյուրներից: Բյուրական գյուղի մոտ Արքաշեն վտակն ընդունելուց հետո հոսում է կանիոնով և Ֆրանգանոց գյուղի մոտ թափվում Քասաղ գետը[13]:

Քարի լիճը: Արագածի մերձգագաթային սարավանդում գտնվող բազմաթիվ լճակներից ամենամեծն է: Այն գտնվում է 3250մ բարձրության վրա, ունի 0.12կմ^2 մակերես, 8մ խորություն: Ջուրը սառնորակ ու վճիտ է: Կարծիք կա, որ լիճն արհեստական է(Նկ. 11)[14]:

[11] http://findarmenia.com/arm/nature/aragatz:
[12] Գրիգորյան Ա., Բնության հուշարձաններ Սովետական Հայաստան, Եր. 1967թ:
[13] Գրիգորյան Ա., Բնության հուշարձաններ Սովետական Հայաստան, Եր. 1967թ:
[14] Տես' նույն տեղում:

Նկ. 11 Քարի լիճը Արագածի գագաթին:

Լիճը հարուստ է ձկներով: Այստեղ բազմանում է Կարմրախայտը:

Ապարանի աղբյուրները: Իզուր չեն այն խոսքերը, որ բնությունը գործում է հրաշքներ: Լճային հաստաշերտը ջրաթափանց հորիզոն է ներլավային գրունտային ջրերի համար, որոնք ձևավորվում են մթնոլորտային տեղումների ներծծման հաշվին և շնորհիվ լավաների ճեղքայնության դուրս են գալիս աղբյուրների ձևով: Ապարանի մոտ բխում են ոչ միայն սառնորակ, այլև հանքային աղբյուրներ, որոնք բուժիչ հատկություն ունեն: Ապարանի աղբյուրները տարածված են անտառներում, Քասաղ գետի գոգահովտի հատակից են բխում և դացիտային լավաների ճեղքերից:

Ապարանի ջրամբարը: Ապարանի ջրամբարը ևս կարելի է դիտել որպես բնական հուշարձան, որը Քասաղի ջրային ռեսուրսները ավելի լավ օգտագործելու նպատակով ստեղծված հիդրոտեխնիկական կառույց է՝ Զովունի գյուղի մոտ(Նկ. 5): Այն կառուցվել է 967թ-ին: Գարնանային ձնհալքի և անձևների ջրերը հավաքվում են՝գոյացնելով մոտ 100մլն մ^3 ծավալով և 320հա մակերեսով ջրամբար, որի ջրի 80-90%-ը օգտագործվում է Ապարանի և Աշտարակի տարածարջաններում: Ձմռանը սառցակալում է: Օգտագործվում է նաև ձկնաբուծության համար:

Նկ.12 Ապարանի ջրամբարը:

Ջրամբարը շրջապատված է անտառներով: Նրա շրջակայքում, ինչպես նաև անտառներում բխում են բազմաթիվ աղբյուրներ, այդ շրջանում կան նաև եկեղեցիներ: Ջրամբարի հարմար դիրքը, մաքուր օդը, լեռնային կլիման նպաստավոր են շրջակայքում առողջարաններ հիմնելու համար: 1972թ-ին կառուցվել է Երևան-Ապարանի ջրամբար ավտոմայրուղին (Եղվարդով):

Արտենի հանգած հրաբուխ: Թալին գնալու ճանապարհին կարելի տեսնել փոքր Մասիսին նմանվող Արտենի հանգած հրաբուխը: Սա գտնվում է Արագածի հարավ-արևմտյան ստորոտին և ունի 2047մ բարձրություն: Արտենիից սկիզբ են առնում լավային հոսքեր, որոնցից գլխավորը Արագածի հոսքն է՝ ներկայացված օբսիդիանով և պեռլիտային ագլոմերատով: Արագածի պեռլիտի հանքավայրը գտնվում է Արտենի լեռան հարավ-արևմտյան լանջին[15]:

Արտենի լեռան վրա հայտնաբերվել են հին քարեղարյան գործիքների հարուստ կուտակումներ: Չնայած լեռը աղքատ է բուսականությամբ, բայց սարավանդային տարածության վրա բավականին գեղատեսիլ է:

Արայի լեռ: Արայի լեռ հանգած հրաբուխը գտնվում է Արագածից արևելք, Քասաղ և Հրազդան գետերի միջև: Ունի 2577մ բարձրություն, անկանոն կոնի ձև՝ հատած զգագաթով, օղակաձև խառնարանով: Լեռան հյուսիսային լանջը անտառածածկ է: Չնայած,որ այս բնական հուշարձանի միայն մի լանջն է մտնում մարզի տարածքում(Նկ. 13):

[15] http://www.findarmenia.com/arm/nature:

Նկ. 13 Արա լեռը:

Ըստ ավանդության, կոչվել է Հայոց թագավոր Արա գեղեցիկի անունով, որովհետև Ասորեստանի թագուհի Շամիրամի դեմ պատերազմելու ժամանակ նա բնակվել է այս լեռան ստորոտում: Օտար նվաճողները լեռն անվանել են Կառնյարըխ («Ճեղքված փոր». նկատի ունենալով գագաթի հարավային կողմում եղած ճեղքվածքը): Տեղացիներն անվանել են Ծաղկահովիտ:

Արայի լեռը տեսարժան է նաև Ս. Վառվառե եկեղեցիով, որի առաստաղից հանքային ջուր է կաթում և եկեղեցու(նրա մի մասը մխրճվում է լեռան մեջ) մեջ փոքրիկ ավազան է ստեղծել:

Եզրակացություններ

Հայաստանի, ինչպես նաև առանձին մարզերի զբոսաշրջային ներուժը գնահատելիս անպայման պետք է հաշվի առնել այն փաստը, որ Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում նոր երկիր է, ինչը նրան շատ գրավիչ է դարձնում միջազգային զբոսաշրջային հանրության համար: Ունենալով նպաստավոր բնակլիմայական պայմաններ, ինչպես նաև գնահատելով զբոսաշրջային առկա ռեսուրսները, պահպանված ժողովրդական ավանդույթներն ու սովորույթները և օգտագործելով պոտենցիալ բոլոր հնարավորությունները՝ Արագածոտնի մարզը կարող է հրապուրել բազմաթիվ զբոսաշրջիկների: Ձևավորելով յուրահատուկ կոմբինացված զբոսաշրջային արդյունք՝ այն կարող է նպաստել ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները և ստեղծելով նոր աշխատատեղեր:

Շատ օգտակար և հետաքրքիր կլիներ մարզում կիրառել էթնիկ տուրիզմը, որովհետև ժողովուրդը հազարամյակների ընթացքում ստեղծել են մշակութային բազում արժեքներ, որոնք քաղաքակիրթ աշխարհում լայն ճանաչման և գնահատման են արժանի:

Էթնիկ տուրիզմի ժամանակ զբոսաշրջիկի հիմնական նպատակը տվյալ էթնիկ խմբի մշակույթին և սովորույթներին անմիջապես առնչվելն է, հետևաբար մարզի ներուժը այս ոլորտում բավականին մեծ է, որի ռեսուրսներն են կենցաղը, ծեսերը, տոները, պար և երաժշտություն, արհեստները, տարազը և այլն:

Ագրոզբոսաշրջությունն Արագածոտնի մարզի համար կարող է դառնալ մոտ ապագայում եկամտի հիմնական աղբյուրներից մեկը: Մարզի 117 գյուղական բնակավայրերից յուրաքանչյուրը որևէ ուղղվածությամբ կարող է դառնալ զբոսաշրջության կենտրոն, բայց արդեն երկուսում՝ Օշականում և Բյուրականում ստեղծվել և հաջողությամբ զարգանում է ագրոզբոսաշրջությունը: Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին բարեկարգ կառուցապատումը, ձորը կից հյուրատներովու սննդի օբյեկտներով, մշակույթի պալատը, գինեգործությունը:

Բյուրականում՝ պտղաբուծությունը, կաթնամթերքի արտադրությունը, առողջարար բնությունը, աստղադիտարանը:

Պատմական և մշակութային ժառանգությունը, հարուստ բնությունը արդեն ինքնին ձգող գործոն է հանդիսանում: Հենց այդ պատճառով հայ զբոսաշրջանային գործակալները զբաղվում են տուրիստների համար հենց պատմամշակութային փաթեթների մշակմամբ: Դա հատկապես ակտուալ է այն արտասահմանցի քաղաքացիների համար ովքեր Հայաստան առաջին անգամ են այցելում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանասյան Գրիգորյան Ա., Բնության հուշարձանները Սովետական Հայաստան, Ե. 1967թ
2. Մանասյան Մ., Սայադյան Հ., Հայաստանի Հանրապետության աշխարհագրություն, Ուսումնական ձեռնարկ, Ե.2014
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ.-ի. հունվար-դեկտեմբերին, Երևան, ԱՎԾ, 2022թ., էջ 123:
4. www.armstat.am ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը վիճակագրական հրապարակումներ ըստ տարիների
5. http://aragatsotn.mtad.am/
6. http://www.findarmenia.com/arm/sights:
7. http://www.navasardtours.com/:
8. http://hushardzan.am/category/aragatsotn/aragatsotn-monuments/: